

# Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառք

29.04.2021

Տիպ՝ [Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ](#)

Հայտատու՝ Ալավերդու համայնքապետարան

<<Հրապարակային սակարկությունների մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդված 2-րդ կետ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանում «31» մայիսի 2021թ. ժամը 12:00-ին տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառք կառուցապատման նպատակով՝ 7 լոտով:

Վաճառվում է՝

Լոտ 1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էվոյան փողոց, N 3/30 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 42.1 քմ մակերեսով հողամաս, 06-002-0038-0490 ծածկագրով, 126300 դրամ մեկնարկային գնով՝ ավտոտնակ կառուցելու համար:

Լոտ 2. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, N 76/50-1 հասցեում գտնվող, այլ հողեր գործառնական նշանակության 96.0 քմ մակերեսով հողամաս, 06-002-0194-0026 ծածկագրով, 192000 դրամ մեկնարկային գնով՝ բնակելի տուն կառուցելու համար:

Լոտ 3. Համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 11-րդ փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 8 հասցեում գտնվող, գյուղատնտեսական արտադրական օբյեկտի գործառնական նշանակության 4050.0 քմ մակերեսով հողամաս, 06-060-0214-0047 ծածկագրով, 1417500 դրամ մեկնարկային գնով՝ պահեստ կառուցելու համար:

Լոտ 4. Համայնք Ալավերդի, Հաղպատ գյուղում գտնվող, վարելահող գործառնական նշանակության 755.3 քմ մակերեսով հողամաս, 06-060-0223-0043 ծածկագրով, 264355 դրամ մեկնարկային գնով՝ գյուղ. արտադրությամբ զբաղվելու համար:

Լոտ 5. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս N 2/20-12/1 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 36.1 քմ մակերեսով հողամաս, 06-002-0061-0173 ծածկագրով, 108300 դրամ մեկնարկային գնով՝ ավտոտնակ կառուցելու համար:

Լոտ 6. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամասի 2/5 շենքի հյուսիս-արևելյան մասում գտնվող, գյուղատնտեսական այլ հողատեսք գործառնական նշանակության 433.2 քմ մակերեսով հողամաս, 06-002-0050-0234 ծածկագրով, 108300 դրամ մեկնարկային գնով՝ այգի հիմնելու համար:

Լոտ 7. Համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի «Դաչա» կոչվող հանդամասում գտնվող, գյուղատնտեսական այլ հողատեսք գործառնական նշանակության 1000 քմ մակերեսով հողամաս, 06-002-0324-0101 ծածկագրով, 250000 դրամ մեկնարկային գնով՝ անասնագոմ կառուցելու համար:

Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%:

Կառուցապատվող հողամասերի համար աճուրդի հաղթողին տրամադրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Հողամասերի հարևանությամբ գոյություն ունեն ավտոճանապարհներ, ջրատարներ, կոյուղիներ, էլեկտրահաղորդման գծեր և գազատարներ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2021թ. մայիսի 25-ը, ժամը 16:00-ն:

Աճուրդի պայմանների մանրամասներին՝ հողամասի ելակետային տվյալներին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին և պայմաններին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ալավերդու համայնքապետարան, (ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1, հեռ.՝ /0253/2-41-00):